«ԵՂՎԱՐԴՇԻՆ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

պետական գրանցման համար՝ 264.130.05676
ՀՎՀՀ՝ 03300225
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հրաչյա Քոչար 14
հեռ. +374 93 58 99 10
էլ. հասցե՝ egvardshin@mail.ru

N - 6

06. 02. 2024 թ.

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի
համայնքի ղեկավար
պարոն Ն. Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

«ԵՂՎԱՐԴՇԻՆ» ԲԲԸ նախատեսում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի շահագործման աշխատանքներ:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 17.08.2022թ թիվ 2477-Ա հրամանով ըստ A կարգի 563.2հազ.մ³ քանակով:

Հաստատված պաշարները դիտարկվել է որպես.

1. շինարարական ավազի արտադրության հումք՝ ավազը ջրով լվանալուց հետո. ԳՈՍՏ 8736-2014 <<Ավազ շինարարական աշխատանքների համար>>,

2. խճի արտադրության հումք՝ ՀՍՏ ԳՈՍՏ 8267-95 <<Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար>>:

ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի ավազակոպճային խառնուրդի հանքավայրը գտնվում է Եղվարդ քաղաքից 3.0կմ արևմուտք: Այն տեղակայված է Եղվարդի հրաբխային սարավանդի հարավային լանջին և զբաղեցնում է 4.04 հա տարածք 1282-1303մ բացարձակ բարձրությունների վրա: Մոտակա բնակավայրերն են՝ Եղվարդ (2,15կմ), Կարբի (4,7կմ), Նոր Երզնկա (3.0կմ), Աշտարակ (5.5կմ) և այլն, որոնց հետ կապված է բարեկարգ ասֆալտապատ և հողածածկ ավտոմոբիլային ճանապարհներով:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- Ամենամեծ երկարությունը - 280մ,

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
Ն. ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

- Ամենամեծ լայնությունը - 175մ,
- Բացահանքի ամենամեծ խորությունը - 20.6մ,
- Մակաբացման ապարների միջին հզորությունը - 0.0մ,
- Օգտակար հանածոյի միջին հզորությունը – 13.94մ,
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը - 563.2հազ. մ3,
- Օգտակար հանածոյի արդյունահանվող պաշարների քանակը - 455.7հազ. մ3,
- Օտարման մակերեսը - 4.04 հա:

Հայցվող տարածքի կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով՝

Y=8452492 X=4465508 2. Y=8452407 X=4465664 3. X=8452594 Y=4465777 Y=8452714 X=4465681

Խնդրում եմ Ձեր լիազորությունների և իրավասությունների շրջանակում ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի խոշորացված համայնքի Եղվարդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով /ծանուցումը ստանալուց հետո ոչ շուտ 21 աշխատանքային օրվա և ոչ ուշ քան 25 աշխատանքային օրվա ընթացքում/ կազմակերպել և իրականացնել հանրային քննարկումներ՝ ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի ավազակոպճային խառնուրդի շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում եմ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ /խմբագրված 2023թ/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշմամբ սահմանված կարգի /խմբ. 28.12.2023թ թիվ 2343-Ն որոշում/ հանրային քննարկումների իրականացումից հետո ընկերությանը տրամադրել արձանագրություն, մասնակիցների ցանկ, տեսաձայնագրություն կամ նկարներ և նախնական համաձայնություն՝ ավազանու որոշմամբ, հանքավայրի շահագործման վերաբերյալ

Հանրային քննարկումների օրի, վայրի և ժամի վերաբերյալ խնդրում եմ լրացուցիչ տեղեկացնել ընկերությանը:

Խնդրում եմ վերը նշված Օրենքի և ՀՀ կառավարության որոշման դրույթների համաձայն ապահովել նաև շահագրգիռ հանրության մասնակցությունը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

«ԵՂՎԱՐԴԵՐԻՆ» ԲԲԸ տնօրեն Ս. Վարդանյան

Հավելված 10

ՁԵ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ԹԻՎ ԵՀԹ-29/317

Տրման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը 07 ապրիլի 2021թ

Գործողության ժամկետը 1 տարի /մեկ տարի /

Ընդերքօգտագործողի անվանումը և գտնվելու վայրը «ԵՂՎԱՐԴՇԻՆ» ԲԲԸ
ՀՀ Երևան, Արագածի 4

Ընդերքօգտագործողի պետական գրանցման վկայականի համարը և ամսաթիվը 264.130.05676 14.02.2002թ.

Օգտակար հանածոյի(հանածոների) անվանումը ավազակոպճային խառնուրդ

Ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները և մակերեսը՝ 1.X=4465508 Y=8452492, 2.X=4465681 Y=8452714, 3.X=4465777 Y=8452594, 4.X=4465664 Y=8452407 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով),
Տեղամասի մակերեսը կազմում է 4,04 հա

Երկրաբանական ուսումնասիրության նպատակը

Կից ներկայացված են՝ ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի ավազակոպճային խառնուրդի երևակման տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման աշխատանքային ծրագիրը

Պ-317

Երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը *(համարը, կնքման տարին, ամիսը, ամսաթիվը)*

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ս. ՊԱՊԻԿՅԱՆ

07.04.2021

X

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Signed by: PAPIKYAN SUREN 3604860490

Կ.Տ

ՏԵՂԵԿ ԱՆՔՀ-ԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման ընդունումը բխում է << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 5-րդ կետի, ՀՀ Կառավարության N 286 և N 2343-Ն որոշումների պահանջներից, համաձայն որի համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում ավազակոպճային խառնուրդի հանքավայրի շահագործման աշխատանքներ իրականացնելու նպատակով՝ նախնական համաձայնություն տալու համար:

Աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի պետ՝ **Բ. Թադևոսյան**